

ԼԱՆԴՇԱՅՏԱԿԻՏՈՒԹՅՈՒՆ

Գ. Ա. ՊՈՂՈՍՅԱՆ

ՍՅՈՒՆԻՔԻ (ՉԱՆԳԵԶՈՒՐԻ) ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԼԱՆԴՇԱՅՏՆԵՐԻ
ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ

Հանրապետության ընդհանուր ֆիզիկա-աշխարհագրական, ինչպես նաև առանձին տարրերի (հողերի, կլիմայի, բուսածածկույթի և այլն) շրջանացման ուղղությամբ կատարվել են մի շարք աշխատանքներ [1, 3, 9, 10 և այլն], որոնք սահմանափակվել են բնական մարդերի, շրջանների և ենթաշրջանների առանձնացմամբ. համեմատաբար քիչ գործ է կատարված տիպոլոգիական փոքր միավորների դասակարգման ուղղությամբ:

Տվյալ հոգվածում փորձում ենք տալ ռեսպուբլիկայի հետաքրքիր, բարդ բնական պայմաններ ունեցող մասերից մեկի՝ Զանգեզուրի լանդշաֆտների և նրանց մորֆոլոգիական միավորների դասակարգումը:

Միության բազմաթիվ համալսարաններում և աշխարհագրական ինստիտուտներում լայն թափ են ստացել լանդշաֆտային խոշոր մասշտաբի դաշտային ուսումնասիրությունները, որոնք մեծ օգուտ են բերում մեր ժողովրդական տնտեսությանը և հատկապես՝ դյուղատնտեսությանը: Այս ուսումնասիրությունները մեծ մասամբ վերաբերվում են հարթավայրերին, մինչդեռ լեռնային երկրների լանդշաֆտների ուսումնասիրության և քարտեզագրման ասպարեզում դեռևս քիչ գործ է կատարված:

Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի երկրաբանական գիտությունների ինստիտուտի աշխարհագրության սեկտորը ձեռնամուխ է եղել Հանրապետության խոշոր մասշտաբի լանդշաֆտային քարտեզագրման գործին: Լեռներն ավարտված են Զանգեզուրի լանդշաֆտների քարտեզը և նրանց բնութագրությունը:

Լանդշաֆտագետների զգալի մասը լանդշաֆտը բնութագրում է որպես զեննտիկորեն միասնո տերիտորիա, լիթոլոգիական հիմքը միշտ մնում է միասնո նրա ամբողջ տարածության վրա, մեկ լանդշաֆտից մյուսին անցումը միշտ ուղեկցվում է երկրաբանական հիմքի կազմության, ինչպես և ունի փոփոխություններ:

Նշված պայմանները չուրաքանչյուր լանդշաֆտին տալիս են հատուկ կերպարանքային (ֆիզիոնոմիական) դժեր, որոնք հնարավորություն են տալիս իրենց արտաքին հատկանիշներով տարրերել հարևան լանդշաֆտներից [2]:

Այսպիսով հարթավայրային լանդշաֆտների առանձնացման և սահմանազատման համար հիմք են հանդիսանում ուսումնասիրվող տերիտորիայի լիթոլոգիական, գեոմորֆոլոգիական առանձնահատկությունները:

Զանգեզուրում տարվող խոշոր մասշտաբի լանդշաֆտային ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ բնական լանդշաֆտների առանձնացման վերոհիշյալ սկզբունքը անհնարին է կիրառել լեռնային երկրների լանդշաֆտ-

ները առանձնացնելիս: Քանի որ լեռնային երկրներում լանդշաֆտները ունեն իրենց տարածման ուրույն օրինաչափությունները, նրանք այստեղ հանդես են գալիս ուղղաձիգ գոտիականությամբ և, ի տարբերություն հորիզոնական զոնաների, նրանց տարածման արեալները ավելի փոքր են և երբեմն կարող են



հասնել 1—2 կմ-ի: Պարզ է, որ նման պայմաններում հնարավոր չէ լանդշաֆտների առանձնացման համար հիմք ընդունել միայն լիթոլոգիական կազմը և ուելիեֆի միասնությունը, որովհետև միևնույն լիթոլոգիական կազմ ունեցող ապառները և նույնատիպ ուելիեֆը կարող են անընդմեջ տարածվել երկու և ավելի բնական գոտիներում:

Այսպիսով լեռնային երկրներում լանդշաֆտներն առանձնացնելիս պետք է առաջնություն տալ ոչ թե լիթոլոգիային, այլ լեռնագրությանը և վերջինիս հետ սերտ կապված կլիմայական պայմաններին, որոնք առաջացնում են ջերմության և խոնավության յուրահատուկ հարաբերակցություն, պայմանավորելով լեռնային երկրներում ուղղաձիգ բնական լանդշաֆտային գոտիականությունը:

Միանգամայն հասկանալի է, որ լեռնային երկրներում լիթոլոգիայի ու ռելիեֆի (մեղու և միկրո ձևերի) և այլ բնական տարրերի դերը լանդշաֆտների սահմանազատման հարցում նույնպես կարևոր է: Նրանց դերը շատ մեծ է հատկապես լանդշաֆտների մորֆոլոգիական միավորների (տեղանքներ, բնատեղամասեր, ֆաջիաներ) առանձնացման գործում, որովհետև միևնույն լանդշաֆտային գոտում, սակայն տարբեր լիթոլոգիական պայմաններում հանդես են գալիս միանգամայն այլ մորֆոլոգիական միավորներ իրենց բնորոշ բնական պրոցեսներով: Իսկ ինչ վերաբերվում է այս կամ այն տերիտորիայի միասեռ երկրաբանական կառուցվածքին, ապա այն կարելի է օգտագործել ռելիեֆի ազդեցության խոշոր միավորների (լեռնային երկիր, պրովինցիա, մարզ), սահմանազատման համար:

Լեռնային երկրներում լանդշաֆտների սահմանազատումը ըստ երկրաբանական պայմանների միատարրության անհնարին է, քանի որ միասեռ լիթոլոգիական կազմ ունեցող տերիտորիաները կարող են հանդես գալ տարբեր գոտիներում՝ իրենց միանգամայն տարբեր պայմաններ ունեցող բնապատկերներով: Նման սկզբունքով կազմված լանդշաֆտային քարտեզները լավագույն դեպքում կարող են լինել երկրաբանական քարտեզների կրկնօրինակները: Դրա լավագույն ասպեկտը կարող է հանդիսանալ Հայկական լեռնաշխարհը, որտեղ 500—600-ից մինչև 4000—5000 մետր բացարձակ բարձրություն և լիթոլոգիական միասեռ կազմ ունեցող տերիտորիաներում հերթափոխվում են 4—5 լանդշաֆտային գոտիներ: Այսպես, Մեծ Արարատ, Արագած հրաբխային լեռնազանգվածների ստորոտներից մինչև լեռնագագաթները առանձին լեզվակներով տարածված է միոցեն-օլիգոցենի հրաբխածին հաստվածքը՝ կազմված միասեռ լիթոլոգիական հիմքից (անդեզիտո-բազալտներից): Զնայած դրան այստեղ հանդես են գալիս հինգ լանդշաֆտային տիպեր: Նման պատկերի ենք հանդիպում և հարավային Զանգեզուրում, որտեղ սկսած Մեղրու կիրճից (500 մ) մինչև Կապուտջիղ լեռնագագաթը (3906 մ) տարածված են միասեռ երրորդական գրանիտոիդները, որոնց վրա առաջացել են մի շարք լանդշաֆտային տիպեր և ենթատիպեր:

Լեռնային երկրներում լանդշաֆտների սահմանազատման առաջատար, հիմնական գործոնը լեռնագրությունն է և վերջինի հետ կապված խոնավություն և ջերմության պայմանների ուղղաձիգ փոփոխությունները:

Լեռնային երկրներում ոչ թե պետք է վերցնել միայն լանդշաֆտի հիմքի, այլ նրա բոլոր տարրերի դարգացման պատմությունը, ինչպես նաև վերջիններիս հնարավոր փոփոխությունները, որոնք պայմանավորված են բնական ներքին և արտաքին պրոցեսների ամբողջ կոմպլեքսով:

Լեռնային երկրներում լանդշաֆտների ուսումնասիրման և մորֆոլոգիական միավորների սահմանազատման միակ ճիշտ ուղին նրանց մանրակրկիտ, խոշոր մասշտաբի դաշտային ուսումնասիրություններն ու քարտեզագրումն է: Միայն այդ միջոցով հնարավոր է բավարարել նյութ ստանալ լեռնային լանդշաֆտների դասակարգման սխեման ճշտելու և հետազոտության մեթոդներն ու սկզբունքները կատարելագործելու համար: Այդ ուսումնասիրությունները կարող են զիտական և պրակտիկ խոշոր արժեք ունենալ:

Այսպիսով, կարելի է նշել, որ լեռնային լանդշաֆտը մի տերիտորիա է, որը աչքի է ընկնում բնապատկերների միասեռությամբ (հողաբուսական ծած-

կույթ, կլիմայական պայմաններ, միօրինակ բնական պրոցեսներ և այլն), սակայն կարող է ունենալ տարբեր լիթոլոգիական հիմք:

Ուսումնասիրվող տերիտորիայի սահմանը արևմուտքից հանդիսանում է Ջանգեղուրի լեռնաշղթան, հյուսիս-արևելքից այն անցնում է Ղարաբաղի բարձրավանդակի ջրբաժան գծով, հյուսիս արևմուտքում՝ Ամուլսարի լեռնազանգվածով: Հարավ-արևելքում ուսումնասիրությունները սահմանափակվել են Հայկական ՍՍՌ-ի սահմանով, հարավից՝ Արաքս գետով:

Վերը նշված սահմաններում ընկած տերիտորիան ունի մոտ 4505,5 քառ. կմ. տարածություն:

Ջանգեղուրը աչքի է ընկնում բազմաթիվ թեք ու դառիթափ լանջերով, որոնք կտրտված են խոր կիրճերով, ձորերով և հեղեղատներով: Ռելիեֆի խիստ կտրտվածությունը, լանջերի թեքությունները, նրանց տարբեր դիրքադրումները, ուժեղ էրոզիոն պրոցեսները, ինչպես նաև մարդու տնտեսական գործունեությունը այստեղ առաջացրել են բնական պայմանների բազմազանություն և խայտաբղետություն:

Վերը նշված գործոնները նկատելիորեն խախտել են Ջանգեղուրի լանդշաֆտների գոտիական տարածումը:

Խոշոր մասշտաբի դաշտային լանդշաֆտային ուսումնասիրությունների, ինչպես նաև աէրոֆոտոնկարների և ֆիզիկա-աշխարհագրական առանձին կոմպոնենտների քարտեզների օգտգործման հիման վրա փորձել ենք տալ Ջանգեղուրի լանդշաֆտների դասակարգումը, որը և միաժամանակ ծառայում է որպես խոշոր մասշտաբի լանդշաֆտային քարտեզի լեզենդա:

Առաջարկվող տաքսոնոմիական սիստեմի ամենախոշոր միավորը ընդունված է անվանել ուղղակի լանդշաֆտ (6, 3), նրան հաջորդում են լանդշաֆտային ենթատիպը, տեղանքը, բնատեղամասը, ֆացիան:

ԶԱՆԴԵԶՈՒՐԻ ԼԱՆԴՇԱՖՏԱՅԻՆ ՏԱՔՍՈՆՈՄԻԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԸ

I ԶՈՐ ՄԵՐԶԱՐԻՎԱԴԱՐԶԱՅԻՆ ՍԱԿԱՎԱԶՈՒՐ, ԿՄԱԽՔԱՅԻՆ ՀՈՂԵՐԻ ԵՎ ՔՍԵՐՈՖԻԼ ԲՈՒՍԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԼԱՆԴՇԱՖՏ (ՀՈԾ ՀՐԱԲԽԱԾԻՆ ԵՎ ՆՍՏՎԱԾՔԱՅԻՆ ԱՊԱՐՆԵՐԻ ՀԻՄՔՈՎ):

1. Զոր ֆրիգանային քարքարոտ, հողաղուրկ, զառիթափ և ուղղորդ լանջերի տեղանք, հրաբխածին ինտրուզիվ ապարների հիմքով:

2. Ցածրադիր ալյուվիալ-պրոլյուվիալ, փոքրաթեք արտահոսման կոների տեղանք, գորշ կմախքային հողերով և կիսաանապատային բուսածածկով:

3. Նախալեռնային գոտու մասնատված թեք լանջերի տեղանք, սակավադոր գորշ կարբոնատային հողերով և թփուտներով (ցաքի):

4. Ցածրադիր հովիտների տեղանք, գորշ կմախքային հողերով, վայրի նոննու և թղենու թփուտներով:

5. Ժայռոտ դառիթափ և ուղղորդ հողաղուրկ լեռնալանջերի տեղանք, ճեղքերում վայրի նոննու և թղենու թփուտներով:

II ԼԵՌՆԱՏԱՓԱՍՏԱՆԱՅԻՆ ԼԱՆԴՇԱՖՏ (ՀՐԱԲԽԱԾԻՆ ԱՊԱՐՆԵՐԻ ՀԻՄՔՈՎ)

6. Շափանակագույն կամ գորշ կմախքային հողերով չոր տափաստաններ (ենթատիպ):

7. Լեռնային բազմախոտասելահողային տիպիկ տափաստաններ:

8. Սևահողային խոնավ տափաստանացված մարգագետիններ:

ա) Հրաբխային փոքրաթեք սարավանդների տեղանք, քարքարոտ սևահողերով:

բ) Շլաքային կոների և հրաբխային գմբեթներով սարավանդների տեղանք:

գ) Տուֆոբրեկչիաներից կազմված գետահովիտներով մասնատված սարավանդների տեղանք:

դ) Հովիտներով մասնատված բլրավետ սարավանդների տեղանք:

ե) Տուֆոբրեկչիաների բուրգերի բնատեղամաս

զ) Շլաքային և հրաբխային կոների բնատեղամաս.

է) Բլրաթմբային-լավային ծածկերի բնատեղամաս

III. ԱՆՏԱՌԱՏԱՓԱՍՏԱՆԱՅԻՆ ԼԱՆԴՇԱՖՏ (ՓԵՐՈՒՆ ՆՍՏՎԱԾՔԱՅԻՆ ԵՎ ՀՐԱԲԽԱԾԻՆ ԱՊԱՐՆԵՐԻ ՀԻՄՔՈՎ)

9. Նախալեռնային թույլ մասնատված, ետանտառային տափաստանների տեղանք, հզոր շագանակադույն հողերով և թփուտներով:

10. Միջին բարձրության լեռների, տափաստանացված, հարթ և փոքրաթեք մակերևույթների տեղանք, դարչնագույն հողերով:

11. Հովիտների մեղմաթեք լանջերի տափաստանացված տեղանք, նախկին անտառների մնացորդներով, բաց դարչնագույն և թխագույն կմախքային հողերով:

12. Տափաստանային տեղամասեր նոր անտառապատման նշաններով:

13. Բարձրադիր սարավանդների տեղանք, տափաստանացված բացատներով կաղնու և կաղնու-բոխու պուրակներով ու հզոր դարչնագույն հողերով:

14. Քարքարոտ լանջերի տեղանք, կաղնու նոսր անտառաբծերով և սակավազոր բաց դարչնագույն հողերով:

15. Հարավային դիրքադրման լանջերի թփութածածկ տեղանք (գերազանցապես ցաբի), քարքարոտ սակավազոր գորշ կմախքային հողերով:

16. Փոքրաթեք սարավանդների տեղանք, շագանակագույն և դարչնագույն հողերով:

IV ԼՆՈՆԱԱՆՏԱՌԱՅԻՆ ԼԱՆԴՇԱՖՏ (ՀՈԾ ՀՐԱԲԽԱԾԻՆ ԱՊԱՐՆԵՐԻ ՀԻՄՔՈՎ)

17. Ուղղորդ քարքարոտ լանջերի տեղանք, նոսր քսերոֆիլ գիհու և տրաքսյան կաղնու անտառներով:

18. Թեք լանջերի տեղանք, խառը մեղրֆիլ անտառներով (կաղնի, թղկի, բոխի) և գորշ դարչնագույն հողերով:

19. Խոնավ, խառը անտառների տեղանք, մարգագետնային բացատների գերակշռությամբ և դարչնագույն հողերով:

V ԲԱՐՁՐ ԼՆՈՆԱՅԻՆ ԱԼՊԱՆ ԼԱՆԴՇԱՖՏ (ՀՈԾ ԲՅՈՒՐԵՂԱ-ՀՐԱԲԽԱԾԻՆ ԱՊԱՐՆԵՐԻ ՀԻՄՔՈՎ)

20. Ենթալպյան լանդշաֆտային ենթատիպ:

21. Ենթալայան փոքրաթեք լանջերի տեղանք, սևահողանման լեռնամարգագետնային հողերով:

22. Ենթալայան ուղղորդ լանջերի տեղանք, սևահողանման լեռնամարգագետնային հողերով:

23. Հարթ և հարթված մակերևույթների տեղանք, ալպյան ճմակալված լեռնամարգագետնային հողերով:

24. Ուղղորդ լանջերի տեղանք, սակավազոր դարչնագույն հողերով:

բ) ջրհավաք ձագարների բնատեղամաս,

թ) տրոգային հովիտների բնատեղամաս,

ժ) շլաքային և հրաբխային կոների բնատեղամաս

ի) Կուեստների և միաթեք կատարների տեղանք, խառը մեղոֆիլ անտառաշերտերով գորշ ու դարչնագույն հողերով:

VI ՁՅՈՒՆԱՅԻՆ ԵՎ ՁՅՈՒՆԱՄԵՐՁ, ԶՐԱՌԱՏ ՏՈՒՆԴՐԱՅԻՆ ԼԱՆԴՇԱՖՏ (ՀՈԾ ՀՐԱԲԵԱԾԻՆ ԱՊԱՐՆԵՐԻ ՀԻՄՔՈՎ)

25. Մերկացած ժայռերի և կատարների տեղանք

26. Կառերի և կառային լճերի, քարքարոտ տունդրային տեղանք

լ) կառերի և կրկեսների բնատեղամաս,

խ) շերտավոր հրաբուխների բնատեղամաս

VII ԱՆՏՐՈՊՈԳՆԵՆ ԼԱՆԴՇԱՖՏՆԵՐ

27. Մերձարևադարձային-այգեգործական

28. Դաշտավարական (վարելահողեր)

29. Այգեգործական

ԱԶՈՆԱԿ ԲՆԱՏԵՂԱՄԱՍԵՐ

30. Կիրճեր և կանյոններ

31. Ս-ձև հովիտներ

32. V-ձև հովտամասեր

33. Կառածև գոգավորություններ

34. Քարքարոտ զառիթափ լանջերի բնատեղամասեր, զուրկ հողաբուսածածկույթից

35. Ալյուվիալ ողողատային բնատեղամասեր

36. Լճային հարթությունների և գոգավորությունների բնատեղամասեր

37. Քարափներ

38. Քարացրոնների և քարային դաշտերի բնատեղամասեր

39. Արտահոսման կոների բնատեղամասեր

40. Դարավանդների բնատեղամասեր

Հողվածին կից ներկայացված սխեմատիկ քարտեզի մասշտաբի փոքրությամբ հնարավորություն չի տվել ցույց տալ վերը նշված տաքսոնոմիական բոլոր միավորները: Ուստի և քարտեզում առանձնացված են միայն լանդշաֆտները, լանդշաֆտային ենթատիպերը և տեղանքները:

ՀՍՍՌ ԳԱ Նրկաբանական գիտությունների ինստիտուտ

Աշխարհագրության սեկտոր

Հնգունված է 30.V.1963.

Д. А. ПОГОСЯН

КЛАССИФИКАЦИЯ СОВРЕМЕННЫХ ЛАНДШАФТОВ
СЮНИКА (Зангезура)

Р е з ю м е

Схемы общегеографического районирования Армянской ССР обычно ограничиваются выделением природных областей и районов, выделением же более мелких типологических единиц занимались сравнительно мало. Для страны с такой сложной природой, какой является Армянская ССР, более дробное деление имеет очень важное прикладное значение. К этой категории можно отнести выделение морфологических единиц ландшафта (местность, урочище, фация).

В данной работе делается попытка классифицировать ландшафты и морфологические единицы Сюника (юго-восток Армянской ССР), отличающегося исключительно сложными физико-географическими условиями.

На протяжении ряда лет сектор географии Института геологических наук АН Армянской ССР ведет работы по крупномасштабному картированию ландшафтов. Уже завершены работы по характеристике и составлению карт ландшафтов 4 административных районов Сюника. Значительная часть ландшафтоведов в основу определения и выделения ландшафтов кладет особенности геологического, литологического и геоморфологического характера изучаемой территории. Проводимые в Сюнике ландшафтные исследования показывают, что в горных странах выделение природных ландшафтов по этому принципу невозможно.

При выделении ландшафтов в горных странах первенствующее значение имеет не геологическое развитие и литология, а орография и связанные с ней климатические условия, которые создают определенные соотношения между температурой и влажностью, обуславливая в горных странах вертикальную природно-ландшафтную поясность.

Понятно, что роль литологии, рельефа (микро- и мезоформ) и других природных элементов в вопросе определения ландшафтов также важна. Их роль особенно велика в деле выделения морфологических единиц (местность, урочище, фация), так как в одном и том же ландшафтном поясе, но с различными литологическими условиями могут быть представлены различные морфологические единицы с характерными для них природными и геологическими процессами.

На Армянском нагорье имеются территории, которые начиная с высоты 500—600 м и до 4000—5000 м имеют однородный литологический состав, но на них наблюдается чередование 4—5 ландшафтных поясов. Так, например, на вулканических массивах Арарат, Арагац, начиная от подножья и до вершин, отдельными полосами тянется миоцен-олигоценовая вулканическая толща, состоящая из андезито-базальтов, которые имеют одинаковый геологический возраст и литологию. Несмотря на это здесь выделяется 5 типов ландшафта. То же самое наблюдается на юге

Сюника. Начиная с Мегринского ущелья (500 м) и до вершины г. Капутджух (3906 м), широким слоем тянутся однородные гранитоиды третичного периода, в которых встречается ряд ландшафтных типов и подтипов.

Основываясь на крупномасштабных ландшафтных исследованиях, аэрофотосъемках и на изучении физико-географических карт отдельных компонентов, автор сделал попытку классифицировать ландшафты и их морфологические единицы.

Для классификации ландшафтов Сюника предлагается следующая таксономическая система: тип, подтип, местность, урочище, фация.

Приводится разработанная легенда крупномасштабной ландшафтной карты Сюника, а также схематическая карта.

Л И Т Е Р А Т У Р А

1. Абрамян Г. С. Сюник (Зангезур) как физико-географическая область и его районирование. Изв. АН АрмССР, геолог.-геогр. науки, т. XIV, № 5, 1961.
2. Анненская Г. П., Видина А. А. и др. Морфологическая структура географического ландшафта. Изв. МГУ геогр. фак-т, лаборатория ландшафт. 1962.
3. Атлас Армянской ССР, Москва—Ереван, 1961.
4. Багдасарян А. Б. О природно-сельхозрайонировании горных стран. Тезисы док. межвуз. совещ. пос. ест.-ист. и эконом.-геогр. районирован. для целей сельхоз. горного Кавказа и республик Закавказья, Баку, 1961.
5. Багдасарян А. Б. О климатическом районировании горных стран. Труды Ереванского госуниверситета, серия географ. наук, вып. 2, 1955.
6. Гвоздецкий Н. А. Опыт классификации ландшафтов СССР. Материалы к V Всесоюзному совещанию по вопр. ландшафт. Москва, 1961.
7. Исаченко А. Г. Основные вопросы физической географии, Ленинград, 1953.
8. Исаченко А. Г. Физико-географическое картирование, часть 3 л., 1961.
9. Оганян К. О. О принципах физико-географического районирования территории Арм. ССР. Научные труды Ергосунта, т. 51, серия географ. наук, вып. 2, 1955.
10. Степанян И. С. Опыт физико-географического районирования Армянской ССР. Изв. АН АрмССР, серия геолог. и географ. наук, т. X, № 2, 1957.